

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարադազապիցի գիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԱՅ 1884 ԹԻՒՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ԳԻՐԳՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ

ՊՐՕԳՐԱՄԱՅ

I. ՏԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ: II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ԹՕՒՈՒՄՆԵՐ: III. ՆԵՐՔԻՆ ՏԵՆՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՆՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: VI. ՀՆՈՒՍԳԻՐՆԵՐ: VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ֆելետոն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն ճիւղերից, թղթակցութիւններ: VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՅԱՆՈՐԴԱԳԻՐ: Տարեկան 10 ռուբլ, վեց ամսուայ 6 ռուբլ, իւրաքանչիւր ամսուայ 1 ռուբլ: ՀԱՏՈՎ համարները 5 կոպեկ: ՀԱՍՑԵՆ. Тифлис, редакция «Мшак».

Խմբագիր—Հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՏՐՈՒՆԻ

ԲՈՂԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Կաթողիկոսական հարցի առիթով:—ՆԵՐՔԻՆ ՏԵՆՈՒԹԻՒՆ: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՆՈՒԹԻՒՆ: Նամակ թղթակցից:—ՀՆՈՒՍԳԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Կարմիր ծաղիկը:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

V.

Մեր անցեալ յօդուածում խոստացանք խօսել այն միջոցների վրայ, թէ ի՞նչ պէտք է անել որ նորընտիր կաթողիկոսը ժողովրդի ընտրածը լինի և ոչ թէ մասնաւոր անհատների:

Փաստերի կարօտ չէ ապացուցանելու հա-

մար, որ մեր եկեղեցին ժողովրդական է, և մեր եկեղեցու հոգեւոր պաշտօնը, ընդհանուր հայոց շայրապետը, ընտրվում է ժողովրդից: Այդ դրութիւնը աւելի ճշտութեամբ պահպանվում էր հայոց անկախութեան ժամանակ, պահպանվեցաւ և այնուհետեւ, երբ Հայաստանը բաժանվեցաւ դանազան պետութիւնների մէջ: Մահապաշտ տիրապետողներն անգամ յարգում էին հայոց եկեղեցու այդ հիմունքը սովորութիւնը և իրանց ֆիրմաներով հաստատում էին ժողովրդի ընտրելին: Իսկ իմիջամբնում առաջ իշխանութեան ներքոյ ընկնելուց յետոյ, 1836 թվին, առանձին Պալատինայով, որ առաջ օրէնքների մի մասն է կազմում,

աւելի որոշ կանոններով սահմանվեցաւ կաթողիկոսի ընտրութեան եղանակը, պահպանելով այդ կանոնների մէջ այն հիմունքները, որ Հայաստանեայց եկեղեցու վաղեմի աւանդութիւնն էր:

Բայց ի՞նչպէս էր կատարվում կաթողիկոսի ընտրութիւնը—այդ մասին հարկաւոր ենք համարում մի քանի խօսք ասել ի հարկէ, ոչ թէ սկսելով չորրորդ և հինգերորդ դարերից, այլ մեր մօտաւոր, շատ մօտաւոր ժամանակներից:

Մեզանում մի տեսակ մարդիկ, ոչ այնքան իրանց բարոյական արժանաւորութիւններով, որքան իրանց գործնական վարպետութիւններով, միշտ ձեռք ձգած են եղել հասարակական գործերի հոգաբարձութիւնը, և իբրեւ արտօնական ժառանգութիւն, վարվել են այդ գործերի հետ, որպէս կամեցել են: Հարկաւոր էր եկեղեցու երեսփոխան ընտրել—այդ մարդիկն էին ներս պրծնում: Հարկաւոր էր դպրոցի հոգաբարձու ընտրել—այդ մարդիկն էին դառնում: մի հարուստ մարդ էր մեռնում, այս կամ այն բարեգործական նպատակով մի նշանաւոր կտակ էր անում—այդ մարդիկն էին կտակատար դառնում: կաթողիկոս էր վախճանվում, հարկաւոր էր նորընտրել—այդ մարդիկն էին հասարակութեան կողմից պատգամաւոր դառնում, մի խօսքով, մեր աւանդաւորական և եկեղեցական բոլոր գործերի մէջ դրանք միջամտութիւն էին անում: միամիտների աչքերում փոշի էին փչում և իրանց շահերին բաւականութեւն էին տալիս: Այդ, կոնսիստորիաների և առաջնորդարանների մէջ մտնել

որսացող կատունները, այդ, կրօնի և եկեղեցու սրբութեան անունով իրանց գրպանները պարարտացնող բարեպաշտները, իրանց անձը հասարակութեան առջև խոհեմ, խելացի և անշահասէր ցոյց տալու համար ևս բաւական խորամանկութիւն ունեին: Նրանք ամեն բան գիտէին, նրանց մօտ ամեն գաղտնիքներ կային, բայց ամեն մարդու ասել չէին կարող, և եթէ նրանց այս կամ այն գործողութիւնը հասարակութեան աչքում վատ էր երևում—հասարակութիւնը իրաւունք չունէր արանջաւու կամ բացաւորութիւն պահանջելու, որովհետեւ նոյն վատութեան մէջ մի լաւութիւն կար, որը նրանք պէտք է իբրեւ դադարեց պահէին: Այսպէս էին խաբում միամիտներին: Իսկ եթէ նրանց այդ ծածկապահութեան վարպետը բարձրացնէր, այնտեղ կը տեսնէր դատարկութիւն և իրանց շահը միայն—աւելի ոչինչ:

Ժամանակակից մամուլը, որ պէտք է առաջնորդող լինէր հասարակութեան մտածութիւնների, որ պէտք է հասկացներ նրան իր իրաւունքները ու պարտաւորութիւնները—մամուլը աւելի ևս թմրեցնում էր հասարակութեանը, և աշխատում էր նրան միշտ անգիտակցութեան մէջ պահել: Նոյն նենգաւոր մամուլի խաւարածութիւնը ներկայացուցիչը հենց այսօր, երբ հասարակական կարծիքը բաւական վարժած է, երբ ունենք զարգացած մարդիկների մի խոշոր թիւ, որոնք չարը բարիից որոշել գիտեն—այդ մամուլի ներկայացուցիչը դեռ ևս այնքան յանդգնութիւն ունի, որ աշխատում է հասարակութեան գլխի տակին կակուղ բարձրել, աշխատում է նրան քնայնել, ստելով:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՐՄԻՐ ԾԱՂԻԿԸ

V.

Դա ամբողջ գիշեր չը քնեց: Դա պառկած էր և կարծես յոյնած լինէր երազական և գոյութիւն չունեցող կուռ մէջ: Առաւօտը ֆելդերը նրան գտաւ հագու կնիքային: Այնուամենայնիւ փոքր ժամանակից յետոյ նրա ուժերը նորոգվեցան, նա դուրս թուաւ անկողնից և առաջվայ պէս սկսեց վազդել իր անդամները մէջ, անկողն և բարձր ձայնով խօսելով իր անդամներին: Նրան թոյլ չը տուին պարտէզ դնալու: Բժիշկը, տեսնելով, որ նրա մարմնի ծանրութիւնը օրէցօր պակասում է և նա այլ ևս չէ քնում, այլ միշտ ման է գալիս, հրամայեց ներս արտել նրա կաշի տակը մեծ քանակութեամբ մօրֆին (ափիոնի քնարեր նիւթ): Դա չը հակառակեց. բարդաւորապէս այդ օպիւմաքիայի ժամանակ նրա կատաղի շարժողութիւնները և անմիտ խօսքերը դադարել էին: Դա չուարեց և դադարեց ամեն ինչի վրա մտածելուց. նա մինչև անգամ մոռացել էր երկրորդ ծաղիկը և կարկուտ:

Այնուամենայնիւ նա կարեց նրան երբ օրից յետոյ ծերունի պահապանի աչքի առաջ, որը տեսնելով այդ հեռուից վաղեց նրա յետնից: Բարձր և ուրախալի աղաղակներով նա վաղեց հիւանդանոցը և մտնելով իր սենյակը, թաղցրեց բոլոր կրծքի վրա:

—Ինչու ես ծաղիկները քաղում, հարցրեց նրա ետնից վաղող պահապանը: Իսկ հիւանդը, որը արդէն պառկել էր անկողնում իր սովորական դրութեան մէջ, ձեռքերը խաչած, սկսեց ասել:

այնպիսի դատարկ ու անհեթեթ խօսքեր, որ պահապանը հանեց նրա գլխից գլխարկը և դուրս եկաւ: Երեկոյան պահուն ծաղիկը թաւաւում էր: Հիւանդը կոխտեց սեպած բոլոր, հաւաքեց յատակից նրա մնացորդը և տարաւ աւագանսանեակը: Այդ բոյսի անձն կտորը ձգելով քարածուխով տաքացրած վառարանի մէջ, նա երկար նայեց ինչպէս ծաղիկը կծկվեց և վերջապէս դարձաւ փափուկ ձիւնի նման սպիտակ մոխիր: Դա փչեց և ամեն ինչ ջրացաւ:

Միւս օրը հիւանդի առողջութիւնը աւելի վատթարացաւ: Սարսափելի դժուարութիւն դէպքով փոս ընկած թշնմով և վառված աչքերով նա չարժանաւոր էր կատարութեամբ մանգալ, թէ նա քաղաւթը տատանող էր և նա յաճախ սայթալում էր: Դա անդադար խօսում էր ինքն իր հետ: —Ես չեմ կամենում, ոյժ գործ դնել, ասաց իր օգնականին բժիշկը:

—Չէ որ անհրաժեշտ է դադարեցնել նրա ման գալը, այսօր նրա քաշը 93 ֆունտ է: Եթէ այսպէս շարունակվի, նա երկու օրից յետոյ կը մեռնի:

Բժիշկը սկսեց մտածել: «Մօրֆին, խօրալ», ասեց նա կիսահարց ձևով:

—Երեկ մօրֆինը չը ներգործեց:

—Հրամայեցէր կապտուղ նրան: Սակայն ես կարծում եմ թէ նա կնիքային կը մնայ:

VI

Հիւանդը, խելագարվածի շաղկապով, պառկած էր իր անկողնում: Բժիշկի հրամանի համաձայն նրան քաղվանի կոտորներով կապտուղ էին մահճակալի երկաթներէ: Նրա կատարութիւնը աւելի սաստկանում էր: Երկար ժամանակ նա կամակորու թեամբ ձգնում էր իր կապաններից ազատվելու: Դա այնպիսի կատաղութեամբ սկսեց շարժվել, որ

պատուեց քաթմանը, ազատեց ոտները և դուրս գալով կապանների տակից սկսեց չըլճել սենյակում, արտատանելով վայրենի և անհասկանալի խօսքեր:

—Ո՛հ, այս ինչ է... ասաց ներս մտնող պահապանը. «Գրիգօ, խան, եկէք օգնեցէ՛ք» արան կապելու:

Նրանք երեքը միասին յարձակվեցան հիւանդի վրա, բայց շատ դժուարութեամբ կարողացան վերջապէս նրան վեր դնել անկողնում և առաջ վանից աւելի պինդ կապել:

Ծերունի պահապանը մնաց նրա մօտ այն գիշեր: Նրան պահեցին ամբողջ օրը կապված դրութեան մէջ և այնպէս էլ թողնելն ամբողջ գիշերը: Ջաղով նրան ընթերց, պահապանը փուլեց նրա անկողնու մօտ մի չոր և պառկեց: Մի րոպէս նա քնեց խոր քնով, իսկ հիւանդը սկսեց իր գործը: Դա ամբողջ մարմնով սկսեց շոշափել երկաթեայ մահճակալի ծայրը և, գտնելով նրան, սկսեց շապկի թիւ քսել երկաթին և քերելով մահճի շրան: Փոքր ժամանակից յետոյ հաստ քաթմանը ծակվեց և նա հեշտութեամբ ազատեց իր մատները: Անասելի ճարպիկութեամբ նա բաց արաւ իր յետքի կապը և արանից յետոյ նա երկար աւանջ գրեց քնած պահապանի խոխոցին: Ծերունին պինդ էր քնած: Հիւանդը հանեց իր ծանր շապկը և բոլորովին ազատվեց կապաններից: Դա դնաց դուռը բաց անելու, բայց նա կողպած էր և բանալին, երկի, պահապանի գրպանումն էր: Վախեցաւ, մի դուռէ նա արթնանայ, նա չը համարձակեցաւ որոնել նրա գրպանը և վրձնեց դուռը գնալ սենյակից պատուհանի միջով:

Տաք, հանդարտ և մութ գիշեր էր. լուսամուտը բաց էր: Ատոգներ փայլում էին սե երկնքի վրա: Պէտք էր կռացնել երկաթեայ վանդակի հաստ

ձողը, նեղ ծակով դուրս գալ պատուհանի մօտ փոքրիկ թուփերով ծածկված տեղը և ապա բարձրանալ քարեայ չըջապարպուղ: Ամառը կը լինի վերջին կուրը, իսկ յետոյ—թէկուղ մահ: Դա փորձեց կռացնել հաստ ձողը իւր մերկ ձեռքերով, բայց երկաթը չը հպատակվեց: Այն ժամանակ, որ երկու իր շապկը և պարտաւորութիւն մի թուկ, գցեց նրան ձողի վրայով և բռնելով նրանից բոլոր մարմնով կախ ընկաւ: Դա չարչարվեց յետոյ ձողը վերջապէս ծակեցաւ. նեղ անցքը բաց էր: Դա մի կրկնով անցաւ նրանով և թուփերի միջով մօտեցաւ չըջապարպուղ: Ամեն ինչ հանդարտ էր: Կանխեցների աղօտ բոլոր երեւում էր շինութեան պատուհաններից բոլորեքնանք քնած էին: Ոչ ոք չէր չէր նկատում: Ծերունի պահապանը երկի դուռը քնած էր և նրա անկողնի մօտ:

Դա փորձեց բարձրանալ պարպուղի ծայրը, բայց չը կարողացաւ և չը նայելով նրան, որ ձեռքերը և ոտները արիւնքաթաթալ էր արել և եղունգները պատուտել, նա որոնում էր յարմար տեղը:

Այնտեղ, ուր պարպուղը և մուկեղտան պատեւրը կպչում էին միմեանց, մի քանի աղիւններ թափված էին: Դա մի կերպով բարձրացաւ պարպուղի վրայ, բռնեց պտղեմու ճիւղից և հանդարտութեամբ իջաւ գետին:

Դա դնաց իր սովորական տեղը, որը գտնվում էր պատշաճմբի մօտ: Մի փոքր ժամանակից յետոյ վերադարձաւ մի և նոյն ճանապարհով իր սենյակը: Ծերունին քնած էր: Հիւանդը անկողնին հասաւ թէ չէ, անգիտ ընկաւ նրա մէջ:

Առաւօտեան նրան գտան մեռած: Դա երեքը պարզ էր և հանգիստ:

Լոյս Աթաբեկեանց

Վ ա ն, 22 նոյեմբեր 1883

Նոյն տեղից մեզ հաղորդում են, որ ծաղիկ հի-
ւանդութիւնը և տաւարի ցաւը շատ տարածւած են
այնտեղ:

Երեզ հաղորդում են ՂՈՒԲԱՑԻՑ հետևեալը. «Չը նայելով, որ զեկտեմբեր ամսի 12-ն է, ձմեռը Ղ-ուբայում շատ մեղմ է և մինչև օրս այստեղ ձիւն չէ եկել: Կենսական պիտոյքները շատ է- ժան են, բայց չը նայելով ամեն բանի առատու- թեանը, առևտուրը ընկել է մեր խաղաղուն և վա- ճառակահանների դրուժիւնը շատ անմայականձել է:

Մ. Պետերբուրգի մի գերմանական լրագիր հաղորդում է ակամատեսների խօսքերից այն անցքի մասին, որ պատահել է Պետերբուրգի կաթօլիկներին եկեղեցում։ Բանը նրանումն է, որ ամբողջ տարվայ համար որոշված ժամաատացություն կարգով կիրակի, կաթօլիկաց եկեղեցում քարող էր խօսում գերմաներեն լեզուով գերմանական աղ-վածիկները պատվանոդ դոմինիկանյան վարդապետը։ Գանկված քարողի մեջևանում լավում է եկեղեցու սպասուարի զանգակի ձայնը և, մի և նոյն ժամա-նակ, գլխաւոր սեղանի վրա յայտնվում է քահա-նան պատարագ սկսելու համար։ Գերմանե-րեն քարողի այդ ընթիվիումը եկեղեցում ներկայ գտնվող բարեպաշտ թաղմաթիւ գերմանացիների դալոյթը չարժեց։ Քարողիչը հարկադրվեցաւ թողնել ամբողնը, ցաւ յայտնելով, որ ինքն էլ գերանգ քարողը վերջացնել։ Զրեատարարում աղ-մուկ-ծաղեց, լեհացիներ և գերմանացիների մեջ կիւի ընկաւ, և թիւ էր մնում, որ գործը հանէր տուրուղտոցի։ Այդ դալթակղութեան պատճառ եղող քահանան նոյն անձն էր, որը ձայն տուեց պրիօր Ֆլօխն՝ լուեէէք։ Ըստ երեւոյթին—նկատում է այդ տաթիթով լրագիրը—այդ մէկը միւսին յա-նդրուղ անկարգութեանների մեջ մի որոշ սխտե-մաւ կայ։ Միթէ այդ բանին վերջ դնելու միջոցներ չը կան։ Միթէ գերմանացի կաթօլիկները չեն կարող երեք չաթթմը մի անգամ լսել գերմանե-նուն քարողը։ Միթէ երկու քահանաներն աւ, որոնք պայտեղ ժամաատացիներն են կատարում, պէտք է միշտ և անպատիժ վիրաւորանքների ենթարկվին։ Գերմանացի կաթօլիկների թիւը Պետերբուրգում մօտ 5000 է, նրանք Պետերբուրգի կաթօլիկների համարեաւ քաւորը մասն են կազմում։ Հինգ հա-զար գերմանացի կաթօլիկներ կարող են անկախ համայնք կազմել, և այն ժամանակ դոնէ նրանց և լեհացիները մեջ ընդհարումներ տեղի չեն ունե-
նում։

թէ՛ եկեղեցականները կարող են մեծ դեր կատարել ներսումս սաստիկ կրօնասէր և միանգամայն սոգնատուղովորի մէջ, այդ անուրանալի ճշմարտութիւն: Ուրեմն մեր ժողովորդի թշուառութեան գլխաւոր պատճառն են նաեւ եկեղեցականները: Արեւի միայն կրօնական գործերի, այլ և մինչև միաստիճան մեր աշխարհական գործերի վերատեսութիւնը յանձնուած է կղերին ձեռք, մասնաւորաբար իւրեքխորի մէջ: Դա է մեր եկեղեցւոյ և միանգամայն ազգի ներկայացուցիչ թիւը: Կուսակալութեան մօտ: Եկեղեցականները երբ որ ուզած են, ապրողած են ահագին աղմուկ ըրածրացունել, միշտ ժողովուրդը արթնացունել և ոգևորել որ խմազդին անիրաւ բռնութեան դէմ: Անգ ամենխայտնի է թէ՛ Վարդանանց պարսից դէմ աստամբելով պատերազմելուն մէջ, ինչ մեծ և սեւծ դեր կատարեցին նա եկեղեցականները: Իսկ ներայժմեան եկեղեցականները, կաթողիկոսից կամ մինչև յետին սարկաւազը (չառ քիչ կան արդիւրի բացառութիւններ), Վարդանանց գործերն ս. եկեղեցականներին ձեռք նակապատելուը կը երկայացունեն: Հերկը չէ որ դիւլացի նայ ժողովուրդը թուրքի բռնաւոր լծին տակ կը ճնշուի, ինչեւթ է նաև որ նայ եկեղեցականի գաւազանին տակ ալ չարչարուի և հարստահարուի: Քաղաքական և կրօնական տղրութիւնը անդադար ծծելով այ դիւլացու արիւնը, ալ բնաւ ոյժ չեն թողուր որ ա տոյ վրա կանգնի: Տ. Հայաստանի մէջ ոչ միայն քաղաքական բարեկեցութեան անհրաժեշտ են, այլ և եկեղեցական: Եղլ և ամին արհեստի անխիտան անձին, օրակա և արդուտը ճարելու անարդը և պարտի տակ խեղդուած մարդեր իրենց իրջին ապաւէն կրնտրին փիղոն ու վեղարը. ուրով մինչև իսկ չարագործներ կը սրբանան մեր ոջև: Ուրեմն այս դրութեան մէջ, ճշմարիտ կրօնասէր նայը, իր ազգային եկեղեցին անկեղծօրէն իրտը նայը պարտաւոր է ձայն բարձրացունել եկեղեցական բարեկարգութիւնը պահպանելու համար: Այս տխուր խորհրդածութիւնները կը ներշնչեն մեզ Արթամարայ խաչատուր կաթողիկոսի անխառ ընթացքը որ, ինչպէս գիտե՞ք արդէն, իւր անխորը և բարեբար Պետրոս Պիւլպիւլ կաթողիկոսին չարչարք սպաննել տալով, ժառանգած է որաւ ամուր:

Այս գործունիս, թէ Կ. Պօլսի և թէ հայ Տփղիսի ազգիւններ գոյթ տուին թէ մի սոսկալի ուսին (ձեանս) իջնելով լուսնէն, Շատախի թաղ կոչուած հաղաքազաւին մի մասը հինմայատակ արած է և սղմաթիւ հայեր փլատախներն տակ թաղուած են: Պօլսի Աղգալին ժողովին մէջ երեսփոխաններն արցուններ և հարցանադուներն արին այս աւերի նկատմամբ և ստրպելին սովելըց յանձնաւորովն որ փութայ փողը ի շատէ օգնութիւնսն հասցունել մուշոդներէ ընտանիքներին և շատաճներին: Շատախը Վանի հարաւակողմն ուր կը բնակին կորիճ, աշխատասէր և արհեսազէտ հայ գիւղացիներն (Վանի Մասշախ կուսած բլղեայ գործուածքը որ ջրի անթափանցիկ և մինչև Կ. Պօլսի և Եգգպտոս կուղարկուի, շատախի գիւղացիներն կը շինեն): Շատախ Աղամարայ կաթողիկոսի թեմն է և իւր եկամուտի խաւսը աղբիւրներէն մին. բայց ինչպէս վարուեալ կաթողիկոսն իւր այդ վիճաւուած հօտին հետ: Եւսց նստաւ Շատախ կաթող ժամանակ. մեր ատորիարքարանէն և ուրիշ տեղերէ օգնութեան մար դրկուած փողերը իր ձեռքով բաժնեց գիւացիներին (Աստուած գիտէ թէ իրեն համար աշխատի բաժին հանած է այդ փողերէն): Բայց այն—6 ամիսներ որ անցուց Խաչատուր կաթողիկոս շատախի մէջ, հաագին ծախքերի դուռ բացին յոյճ գիւղացիներին համար որք թէ և իրենք վիճաւուած, հողիւ թէ ցամաք հացով կարող էին այս սղով ստրպաւած էին հիւրաբարել կաթողիկոսը ուն առջև պէտքը որ ամեն օր երկու անգամ 10—տեսակ կերակուրներ հանել և կաթողիկոսին որ հետ ստորացուցած 20-ի չափ ձիաւոր մարդն կերակրել իրենց ձիերով միատեղ ձրիապէտ: Եւ Շատախի թաղին մէջ ուր կաթողիկոսը միանելով մնաց ձրիապէտ կենալ վարելու հաւոր, հաղիւ թէ 150 տուն հայ կայ, խեղճ և թշուատանանիքներ: Ով որ կաթողիկոսին ոնէ հրամանին փողը անհնադանաղ լինի, գաւազանի հարուածուի տակ աղաւաւս կը ծեծուի և անտհետեւ:

Կարգադրական կառավարությունն ձեռք մանուկներով փախչելու մեջ կը քաշէ իւր յանցանքը: Այս դրութեան մէջ, ինքնին հասկանալի է որ խեղճ դիւանագէտներ որչափ ալ աղքատ լինի, պարտաւոր է իւր աչքը եւ ստացուածք ծախելով պատուաւորել կառավարութիւնը: Թէ ինչ անօրինակ անգլիականամբ լարուած է Խաչատուր կաթողիկոս Հաստալցիներին հետ, սրանից կարող է իմանալ ընթերցողը որ փլատակներով տակէն հանուած մուռններով անցանակները կողոպտերն եւ չէ՛ հաւանոր յանձնարարաց թշուառ ընտանիքներին ողբ առանց ընտանքանիքին, առանց հացի եւ առանց զգեստի մնացածն այժմէ Այս, սրբազան կաթողիկոսը խեղճ չէ՛ արեւ խել ընտանիքների ձեռքից իրեցն ընկերոջ ազուկանները եւ այդ արինաթաթախ զգեստները նկարան փողաղբերով լուանալ տուած է որ յարմար առիթով ծախէ եւ փող դիզէ իւր համար: Երբին սրբազնութիւնը այդ խեղճայիները թաղելու ամար վարձատրութիւն ստացած է ըռնի: Խեղճ կաթողիկոսը հայ կինը իւր սիրելի ամուսնի եւ զատկերի մահը ողբալ, թէ նոցա թաղման ծախքը արելու միտ մտածէ:

Նախատուր կաթողիկոս բաւական չը համարելը ր անձնականի պատճառով գիւղացիներին արած հնազանդ ծախքերը և կենէն «դպրոց պիտի չինեմ եղ համար» տակելով 200 օամ. ոսկիի չափ բռնելը հաւաքէ Շատաթիի գիւղացիներէն որք ուսուցումաց և պատասպարօրէլու տուն չունենալով անհարկ մնացեր: Այդ հաւաքած գումարի քաւորըը խլան կը ծախսէ դպրոցի շինութեան. իսկ մնաածը մինչև այժմ կը բնակի դեռ. կաթողիկոսի րպանը: Չը գիտեմ թէ ինչ անուն պէտք է տալ ի այսպիսի գործի, թէև ինք սրբազան կաթողիկոս կը պարծի իւր արածի վրա և կուզէ փաւարտուի իբր ուսումնասէր եկեղեցական, իւր եւմին մէջ դպրոցներ բացող կաթողիկոս: Մեր իջ պակաս չեն այդպիսիներ որք մէկ ամբողջ իջ կը գողանն և նորա չորս ոտք չորս աղքատի ողորմութիւն տալով, կը յաջողին իրենց անուն արեւբար հրատարակել տայ:

Խաչատուր կաթողիկոս չը նայելով որ իւր վիճակն ընտանիքներ յետին տղիստութեան և թշուառութեան մէջ կը գտնուին, չընայելով որ արդէն իւր իրաւաստութեան տակ գտնած վանքերը անկարող կառավարել և Աղթամարի վանքի մէջ անգամ ի նստակրթական դպրոց չը կայ, կուզէ իւր իրաւաստութեան տակ գրաւել Ռշտունահայ Նարեկացի վանքը որ Էջմիածնի թեմ է: Վանահայր Յովնէսփապրդայտն մի քանի ամիս յառաջ վախճանած որ, Խորինան Հայրիկ առժամանակեայ վանահայր ըկած էր Արիստակէս վարդապետ Տէր-Սարգսնին: Կաթողիկոսը գրգռած էր մտտակայ գիւղահայերէն որ Արիստակէս վարդապետը ծնծկելով իւր ձգնն վանքէն, բայց չէր յաջողած: Մի քանի շաբաթ յառաջ վարդապետը գործով կը դադարէ և կաթողիկոսը կերթայ կը բազմի Նարեկացի վանքը, իւր իրաւաստութեան տակ հրատարակելով այն, նաև սպառնական նամակներ կը գրէ Հայադէկի որ չը համարձակի ալ ևս վանահայր զրկել իր ստեղծութիւնէն: Երբ թէ պատմական փաստերով հաստատուելով որ Նարեկի վանքը Աղթամարի թեմ է և թէ Էջմիածնի: Նամակ կը գրէ նաև Վալի փաշային թէ Հայրիկ ուղելով Ռուսաստան նստող կաթողիկոսի թեմը ընդարձակել, կը յափշտակէ և առնէ իւր իրաւաստութեան տակ Նարեկի վանքը որ դարերէ հետէ Աղթամարի կաթողիկոսին կը տրարեր: Մի և նոյն ժամանակ կը խնդրէ Վալի փաշայէն որ իւր բարձր հրամանով սղաշտպանէ Աղթամարի իրաւունքը Էջմիածնի դէմ: Վալի փաշան այնչափ խոսեմ կը լինի որ բաւական կը հասարի այդ նամակը ցոյց տալ Վանի առաջնորդին նորա ուշադրութիւնը հրաւիրել, բռնի միջոցներով զինը չը համարձակիր, ինչպէս որ խնդրած էր կաթողիկոսը: Հայրիկ այս եղելութիւնը տեղեկանած է պատրիարքարան որմէ եկած վճռական համաններէն համեմատ Խաչատուր կաթողիկոս Ռուսաց Նարեկի վանքէն, սպառնալիքներ ուղարկել Հայրիկին: Աստուկայ դուր կը չարուանայ ի միջնայտութիւններ... Ինչը կէս կարող անել մեր եղելցականներ և նոքա ինչներ կանեն... Ընթերցողը չը չառնէ ծանօթացած կը լինի այժմ Խաչատուր կաթողիկոսի գործերէն: Միսի Մկրտիչ կաթողիկոս արդէն յայտնի է ձեզ թէ իւր փառասիրտունամբ և ցած մասնութիւններով ինչ փորձանքեր բերած է պատրիարքարանի և ազգի գլխին, մնայ այժմ մեր յոյս Էջմիածնի ընդհանրական կաթողիկոսին վրայ որ կը մաղթենք որ խեղճ ձկնա-ձայաատանքների ցաւերին ծանօթ, աւելի օրորապատէ քան փառասէր, ազդեցութիւն

ապարաձեռնություն (ինքնդատիվ) ունեցող մի ժողովրդի որ վերջ տայ եկեղեցական անկարգություններին և Լուսավորչի հօտը հազառե պատահող զայլերից և ահա այդ ժամանակ Տաճկա-Հայաստանի կիսամոռ. ժողովուրդը պիտի ոյժ ստանա և վեր ելնէ իւր թշուառութեան խորխորատից։ Եւ ձեզ դրած էի արդէն որ վանդաների մէջ կարաւան կողոպտուած էր Էրզրումի մօտ, մի քանի հազար ոսկի վրա տարւոյն Կ. Պոլսի Լրատվանքի հրատարակեցին թէ գողեւր և գողցուած զանաւոր գտած է կառավարութիւնը. բայց սուտ է այդ։ Կողոպտուած վանդաներ ոչինչ չը կրնաւր ստանալ, յուսահատ եկած են Ռուսումն վանքի քանի շաբաթ յառաջ վանէն Էրզրում գնացող փոշտն ալ կողոպտուեցաւ Մանազկերտի մօտ Թոշար կը տանէր իւր հետ 1000 ոսկիի չափ Եւս օրեր կասն թէ գողեր և գողօճըր գտնուած են։ Հաւանական է, որովհետեւ վալի փաշան այս 200 ոսկի կը զրկէր այդ փոշտով Կ. Պոլիս։ Այդ պատգոյցն է որ երբ կառավարութիւնը ուզէ, կարող է ձերբակալել գողերը և ապահովութիւն հնոցնէն ալ կողմեր. բայց իւր իսկական շահը իմանալով՝ ուզէր։

Բաշկարայի առաջնորդ Յովհաննես վարդապետը ինքնապաշտպանություն համար մի ջոկը պահանձավ լինելով, բանտարկուած էր մահապարտներին հետ, սպմ արձակուած է բանտէն պատմաբարձարի մէջնորդութեամբ: Բայց զեռ խնդիր վերջացած է թողուլիս, վարդապետը երաշխաւորութեան տակ անտուած է:

Վալը փաշան հանրապետյն կրթութեան ժողովին մէջ լիտի մատարիք) անդամ անուանեց երկու խմբեր, Պ. Սեդրակ տէր-Սարգսեայ և պ. Սեդրակ Պարթեան: Կը մաղթենք որ այդ պարոններ անստղարտ պահեն իրենց ժողովրդականութեան համար, նոյն իսկ կառավարութեան պաշտօնեայ հաշմանտեան իրիւնան հայրիկ դեռ պատշաճ է: Երազ մի քանի օրէն յետոյ կերթայ Սուշ, ուր համեռ անցունել օրիկ, գալուստին կը լինի Կ. Պօլիս:

Հրանտ

ՀԻՒՄԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՆԲՐՈՒԻԳ, 19 ղեկսմբերի, երէկ
Երկուշաբթի ճիշդ ժամը ուսումնարանի
մէջ բացվեցաւ Լեւոնտօլեան Թանգարանը
Կահլիճի կենտրոնում դրված է Լեւոնտօլեան
Բրոնզէ արձանը բնական մեծութեամբ
Պղնձեբերն ընտանեկան պատկերներ են դրե-
լած, որոնց Թեւոմ բանաստեղծի մեծ պատ-
երը, որ քաղված է այն ժամանակ, երբ
այս Երբ-գուսար էր, բացի այդ կան երկու
մեծ խուցեր Լեւոնտօլի գրքերով և ձե-
ւարարով: Բացի այդ, Կահլիճի մէջ գտնու-
լում են Լեւոնտօլի գեղարուեստական աշ-
խատանքները, նրա ժամանակակիցների պատ-
երները և նրա արձանի նախագծերը Պէ-
տիզօրսկի մէջ: Սուրբ Եկիւնի սպանութեան
գործի քննութիւնը կատարում է առանձին
շահաւոր գործերի քննիչ Աշանին Ս. Պե-
տրբուրգի դատաստանական պալատայի ե-
րաշանդական դատարանի պրօկուրօրներին
և պրօկուրօրական իշխանութեան միւս ան-
ամսերի Հսկողութեամբ: Բոլորական օ-
րիցները, որոնք վերջացրին իրանց ու-
ումը արտիլերիական ակադեմիայի մէջ և
նաչին Ս. Պետրբուրգում դարձեալ մի-
նարի գործնական պարապմունքների Հա-
նար, իրանց կառավարութիւնից առաջար-
ութիւն ստացան վերադառնալ Բոլշարիս-
կին և նոր տարին:

Աթլէւի, 19 ղեկտմբերի: Տրիկուպիս
պատգամաւորների ժողովի մէջ Հաստատեց
յունական պատրիարքի Հրաժարական
ըրբը եւ յայտնեց, թէ ղեռն ա յոյս կայ,
որ պատրիարքը եւ Բ. Դուռը Համա-
այնութիւն կը կայացնեն, իսկ Թունաստա-
րի ղեկավարական միջամտութիւնը աւե-
նի եւ մնասէ քողով:

ՖԵՐԼԻՆ, 17 ղեկտեմբերի: Ռուսաց ղեկաւոր Փարիզի մէջ իշխան Օրլով, որ Փարիզից Ս. Պետրբուրգ է ուղևորվում, այսօր ընդունվեցաւ գերմանական կայսրից, կայսրուհուց և թագաժառանգից:

ԲԵԼԳՐԱԿ, 19 դեկտեմբերի: Մինիստրնե-
ի խորհուրդը վճռեց արձակել սկոլաչի-
ան և փետրվարին նորը հրաւիրել:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ВУСԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՆՈՒՄԻ ՖՈՒՉՈՒՖՈՒԹԵՑ մինչև այս տարվայ վերջը ծախվում է 1 ռ. 60 կ. ֆունտը ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԵՋ. Հարկաւոր չէ 2 ռ. 20 կ. կամ 2 ռ. 50 կ. վճարել ուրիշ տեղ վատ թէյի համար: Նոյն տեղ էժան վաճառվում են արհեստական ծաղիկներ ապակե ծածկոցներով, լամպաներ, գլխարկներ, դրամ, տրիկո և ուրիշ շատ ապրանքներ: ԿԻՍՏԱԳՆՈՎ:

1—10

ԿԱՆԻՔԻ ԳԻՆԻՆԵՐ „ԱՆԱՋԱՆ“ ԿՐՊԱԿԻՑ
ՍՕՐՋԱԿԱՆ ԲՈՂՈՂ, տուն № 12 (կարևա-
ծական բանկի հանդէպ): Տօների համար
ստացված են մեծ քանակութեամբ ամենա-
լաւ տեսակի գինիներ (20 կ. մինչև 1 ռու-
բլ):

1—3 (չ. հ. շ.)

ՎԻՆՆԱԿԻ ԿՐՊԱԿԻՑ Կ. ԿՐՊԱԿԻՑ
Վ. Կ. Կ.

ՍՐՏԱՒԱՋԻ Լ ՄԱՐԿԱՐԵՏ
Կամ

ԻՐԱԿԱՆ ՎԵՊ ՄԻ ՀԱՅ ԲԺԻՇԿ
ՈՒՍԱՆՈՂԻ

Վաճառվում է „Կենտրոնական գրավաճա-
ռանքում“, գինն է 1 ռ. 2—5

ԱԴՐՈՄԵ,
включая скотоводство, пчеловодство и
садоводство, ищет место арендатора
или управляющего. Адрес: Елизаветинская
улица, д. № 133. Э. Рей-
хель.

ԲԺԻՇԿ ԿՈՐԵ ընդունում է հիւանդներին
առանձնակի 9—12 ժամը, իսկ երեկո-
յան 5—7 ժամը: Հաւարար, Բոգոլյայ
հրապարակ տուն № 13:

2—2 (1)

ԿԱՆԱՆՑ ԳԵՐԶԱԿ Գ. ԱՆԻՍԻՆ Լ ԸՆԿ.
Մինչև մարտի 1-ը մի ամսվայ ըն-
թացքում կատարելի պատւէնները ըն-
դունում են 20% զիջումով: Գանձու-
կայա փողոցում:

3—3

Մամուլի տակից լոյս տեսաւ
„ԱՐԱՐԱՏԻ ԳԼՈՒԽԸ“

Ճանապարհորդական տպաւորութիւնների
նկարագիր Դ. Լ. Սորբոյցեվի. (Թիֆլիսից
սկսած մինչև ԱՐԱՐԱՏԻ ԳԼՈՒԽԸ)
Մաքուր տպագրութիւն, ամէն թղթի
փրակ գինն է 1 ռուբլ հանդերձ ծանապար-
հաճախով:

Ծախվում է Շուշուում փոխադրողի մօտ,
որին կարելի է դառնալ այս հասցեով
„Шуша, Аракегу Бабахянянцу“.
Ծանօթ. Կրքիս յարգելի բաժանորդնե-
րին յայտնում են ի գիտութիւն, որ ամեն-
բն է շուտով կը ստանան իրանց գրքերը:
Ա. Բաբխանյանց:

6—10

Խոնարհաբար խնդրում են
այն անձինքներին, որոնց ուղարկված է Ոսկի
Արարիչ գրքից վաճառելու համար, բարեւան
փողերը և մնացած օրինակներն մինչև յունվարի
հասցեն ինձ. իսկ նոր ցանկացողները թող դի-
մեն Կենդրոնական, Զ. Գրիգորեանցի և
Շահինբեկեանցի գրավաճառանոցները, նոյն-
պէս և ինձ հետեւին հասցեով. Թիֆլիս, Օգա-
նու Ստեփանյանց:

Յայտնի և տաղանդաւոր բանաստեղծ
ՍԵՅԱՏԻ (կապիտան Պետրոս-բեկ Մատա-
թեանց) ընտիր բայց անտիպ մնացած բա-
նաստեղծութիւնները փոշու տակից և կո-
րստեան ծանանապարհից ազատելու հա-
մար հատորներով հետգհեմէ լոյս աշխարհ
պիտի հանեմ: Ամենայն ինչ պատրաստ շու-
տով մամուլի տակ կը մտնէ իմ սեպհական
տպարանում արագաձուլ մեքենայով: Առ-
այժմ կը տպվի երեք հատորիկը միասին,
կանխիկ բաժանորդագրողների համար մի
ըւրիւ. տպագրվելուց յետոյ գինը կը բո-
ջանայ:

Ցանկացողները թող շուտով մեկ հասցեն
իրանց բաժանորդագրին հետեւալ հաս-
ցեով.

Въ Баку. Въ типографію Алек-
сандра К. Касабова.

Ա. Ղասապեանց:
7—20

Էժան գնով ծախվում են ԲԵԼԻՍԻ ՀԱՆ-
ՑԵԼԻՆԵՐ, ՀՐԱՅԱՆ Լ ԲԵՎՈԼ-
ՎԵՐՆԵՐ, ՎԻՆՆԱԿԻ ԹՅՆԷԺ գործարա-
նի ԱՌՈՒՆԵՐ և այլն: Գալերէյ Ար-
ծուհի № 181. Գփրցովայա փողոցի վը-
րա:

3—10

4000 ԱՓՄԵՆԵՐ 1-ին տեսակի 2 ռ. դիւթիւր,
դանակներ և պտտառաքողներ, թէյ առաջին
հունձի 1 ռ. 60 կ. հիւնալի, ԿՈՆՖԵԿՏՆԵՐ հազի
դիւթ և զանազան տեսակ մորաքաներ, էսէն-
ցիա կակաօ, պիկուլի, ՀՐԱՅԱՆԵՐ, ԲԵՎՈԼ-
ՎԵՐՆԵՐ, ֆրանէ և այլն մեծ քանակութեամբ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԵՋ: Նոյն տեղը ամեն
ժամանակ անգլիական և ֆրանսիական երկրի
մահճակալներ և ուրիշ ապրանքներ ծախվում են
30% էժան քան թէ ուրիշ տեղ:

5—8

ՀԱՅՈՑ ԿՈՎԿԱՍԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵ-
ՐՈՒԹԻՒՆ

Հայոց Կովկասի Բարեգործական ընկերու-
թեան անգամակցութեան տունը՝ ներկայ եր-
րորդ տարեշրջանի համար՝ ծախվում են ՇՈՎԻՍ-
ՆԵՍՆ և իրար կողմէն, պ. ԵՓ. ՄԱՏՈՒՐԵՆԵ-
ՑԻ լամպայի մաղաղները և ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ու
ԿՈՎԿԱՍԵՆ գրավաճառանոցներում:

„ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹԵՐԹԻ“

Խմբագրութիւնը ընդունում է բաժանոր-
դագրութիւն 1884 թ. (որ է 3 տարե-
շրջան):

„ԹԵՐԹԸ“ կը հրատարակվի ԵՐԵՒԱՆԻՄ,
նախընթաց տարիների ծրագրով, կը տպա-
գրվի պ. Էմին Տէր-Գրիգորեանցի տպարա-
նում:

Տարեկան գինն է 3 ռուբլ կանխիկ վճա-
րելի:
Ստորագրվել կարելի է խմբագրատանը.
օտար քաղաքացիք դիմում են հետեւալ
հասցեով՝ В г. Эривань. Въ редакцію
журнала „Гигиенический Листок“.

Խմբագիր-հրատարակիչ Բժ. ԼԵՆՈՆ ՏԻԳ-
ՐԱՆԵԱՆՑ.

Въ среду, 21-го декабря,
въ залѣ Тифлискаго Собранія
будетъ устроенъ

КОНЦЕРТЪ

съ участіемъ

Н. Б. ПАНШЪ,

М. Н. Семеновою, Н. П. Гамбаровою и Н. Н. Гор-
скаго.

20% чистаго сбора, по опредѣленію совѣта
старшинъ Собранія, назначаются для вспомо-
ществованія учащимся, не имѣющимъ средствъ
для взноса платы за обученія. Р. (2) 1.

КЕЛЕРСКАЯ УКСУСНАЯ ЭСSENция.

47—50

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ ՄՕՍԿԱՑՈՒՄ

ԲԱՅՅԻԻ „ՋԱԼԱԼԵԴԻԻՆ“ ՎԵՊԸ:

6—7

ՅԱՌԱՋԻԿԱՅ 1884 ԹՈՒԱԿԱՆԻՆ

„ԱՐՁԱԿԱՆԻՔ“

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ

ՄԻՆԵՐՈՅՆ ԴԻՐԲՈՎ ԵՒ ՀԵՏԵՆԵԱԼ ՊՐՈԳՐԱՄԱՑՈՎ.


I. Տեղեկութիւններ կառավարութեան գործողութիւնների և օրէնսդրական միջոց-
ների մասին:—II. Առաջնորդող յօդուածներ ազգային և հասարակական կեանքի նշա-
նաւոր հարցերի վերաբերութեամբ:—III. Թղթակցութիւններ հայաբնակ տեղերից, ընդ-
հանուր տեսութիւն հայ և օտար լրագրողների տեղեկութիւնների և կարծիքների:—IV.
Տնտեսական և առեւտրական հարցեր փոխադրութեան մէջ:—V. Յօդուածներ ազգա-
կին կրթութեան վերաբերութեամբ:—VI. Արտաքին տեսութիւն. յօդուածներ
տեղեկութիւններ արտասահմանեան հասարակական և քաղաքական նշանաւոր անցքե-
րի մասին:—VII. Կրթիկա և մատենախօսութիւն:—VIII. Ֆէլիէտօն:—IX. Խառն լու-
րեր:—X. Յայտարարութիւններ:

Տարեկան բաժանորդագրին է 5 ռ.

Կէս տարուանը 3 ռ.

Թիֆլիսում ստորագրութիւն ընդունվում է խմբագրատանը և „Կենտրոնական գրավա-
ճառանոցում“:

Օտարաքաղաքացիք դիմում են Тифлисъ въ Редакцію „Арцаганкъ“.



ВНОВЬ ЕЩЕ ПОЛУЧЕНЫ
ПОСЛѢДНИХЪ ФАСОНОВЪ
Мужскія, дамскія и дѣтскія

Ш Л Я П Ы
И
ДРУГІЕ МОДНЫЕ ТОВАРЫ.

Большой выборъ дамскихъ и дѣтскихъ осеннихъ и зимнихъ ШЛЯПЪ
СЪ ОТДѢЛКОЮ и ВЕЗЪ ОТДѢЛКИ

ВЪ СКЛАДѢ ЗАГРАНИЧНЫХЪ МОДНЫХЪ ТОВАРОВЪ

Г У Л А С П О В А,

на Дворцовой ул. д. САРАДЖЕВА и ЦОВЬЯНОВА, во дворѣ, № 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8,
рядомъ съ магаз. Варшав. обуви Гиргитова, ходъ же во дворъ съ Кондитерской Ренье.

МУЖСКИЕ.	Дамскіе	ЖЕНСКИЕ.
Дамскіе и дѣтскіе.	Дамскія касторовыя шляпы безъ	КОРСЕТЫ.
ЗОНТИКИ.	отдѣлки.....	ВЪНЧАЛЬНЫЕ
МУЖСКОЕ И ДАМСКОЕ	каст. шл. съ отдѣлкою.....	УБОРЫ.
ВЪДЪ.	платежныя.....	ПЛАТКИ.
ПЕРЧАТКИ.	котиковыя шапочки.....	КРЕПЬ-ЛІСТЬ.
ВЪЕРА.	Мужскія касторовыя шляпы.....	ЧУЛКИ.
ВОРОТНИЧКИ	котиковыя.....	НОСКИ.
И	шелковыя цилиндры.....	ТАЛСТУКИ.
РУКАВЧИКИ.	складные цилиндры.....	ФУДЖИ и МУФТЫ.
ПАРФЮМЕРИ	фуражки.....	ФОРМЕННЫЕ БАШЛЫКИ
(Духи, пудра и мыло).	Дѣтскія касторовыя шляпы для	ПОРТМОНЕ
ИСПАНС. И БРИТОНС.	дѣвочки безъ отдѣлки.....	ДРУГІЕ МОДНЫЕ
КРУЖЕВА	съ отдѣлкою.....	ТОВАРЫ.
КРУЖЕВНЫЯ ФИШЮ	для мальчиковъ.....	
и другіе модные товары.	Шляпы для священниковъ.....	
	Всевозможныя отдѣлки для дамскихъ шляпъ: плюшь	
	цѣты (для шляпъ и вечеровъ), ленты, страусовыя перья,	
	перья фантазіи, бархаты, пражки, вуали, стеклярусныя	
	кружева, стекларусъ фунтами, лонпоны и проч.	
	Форменныя шляпы для гимназистовъ.	

БОЛЬШОЙ ВЫБОРЪ ИСКУССТВЕННЫХЪ ЦВѢТОВЪ.

Принимаются заказы дамскихъ ШЛЯПЪ, букетовъ, вѣнковъ и гирляндъ изъ жи-
выхъ и искусственныхъ цвѣтовъ.

Принимаютъ въ передѣлку дамскія ШЛЯПЫ и завивку перьевъ.

Заказы иногородныхъ исполняются аккуратно.

Всѣ товары, находящіяся въ моемъ складѣ, продаются дешевле противъ другихъ
коммерсантовъ.

ТОРГОВЛЯ ОПТОМЪ и РОЗНИЧНО.

СКЛАДЪ ОТКРЫТЪ ЕЖЕДНЕВНО ОТЪ 8 ЧАСОВЪ УТРА, ДО 10 ЧАСОВЪ ВЕЧЕРА.

М. Гуласовъ

2—8